Հոգևոր պատրաստութիւն առ ա_ [illegible] ծնունդն Քրի. որ սկսանի 'ի նոյեմբերի 29. և շարունակեալ աւարտի 'ի 24. դեկտեմբերի:

ՏԵՐ աւուր աստա_ ցես քառասուն ող_ ջոյն քեզ մարիամ: բաժանեալ 'ի չորս տասնեակս. Ի չորից տե_ սակաց աղօթից յարելոց առ իւրաքանչիւր ողջոյն: Որով բովանդակեն 'ի 29. էն նոյեմբերի մինչև 'ի 24. դեկտեմբերի լինի հազար ողջոյն. առ 'ի գնալ ընդհեա

օրի

օրինակի երանելի կատա-րինեայ պօլոնիացւոյն 'ի կարգէ սրբուհւոյն Քլա-րայ. զի սա 'ի գիշերի ծնն-դեանն քո ասաց ջերմին սի-րով զհազար ողջոյնս ան-ընդհատ:

### Յառաջնման աղօթ...

Ա Նախ ասասցես զառաջին ողջոյն քեզ Մարիամ. և հինէ տամ ողջունի յարես-ցես ջերմեռանդութեամբ ըն-թանաս զայս:

Օրհնեալ է ժամն այն ով կոյս Մարիամ. յորում ե-ղեր մայր այ:

### Յերկրորդում փառնէքէ ։

Դարձեալ ասասցես ըզ-
տասն ողջոյն. և զկնի տ̃մ
ողջունի ասասցես զհե-
տևեալ բանս ։
Օրհնեալ է ժամն այն ո՛վ
կոյս մարիամ. յորում ծը
նար զորդին ա̃յ ։

### Յերրորդում փառնէքէ ։

Դարձեալ ասասցես ըզ-
տասն ողջոյն. և զկնի տ̃մ
ողջունի ասասցես զայս ։
Օրհնեալ է առաջին շիթն
կաթին ո՛վ կոյս մարիամ.
զոր դիեցաւ ՚ի ստեանց քոց
որդին ա̃յ ։

Ի չորրորդում տաղնէն:

Պարծեալ առաքեցես ըղ-
տաան ողջոյն. և զկնի մ̄մ
ողջունի առաքեցես զհե-
տեւեալ բանս:

Որհնեալ է առաջին համ-
բայրն այն ով կոյս մա-
րիամ. զոր ետուր մ̄ծ այլին
շրթանց որդւոյն քո:

Ծանուցումն:

Ի հաստանիլ աւուր հոկ-
ման սր̄բ ծննդեան 'ի յե-
րեկոյեան ժամուն. յոր-
ժամ՝ սկսանին հնչեցուցա-
նել զզանգակն վ̄ն պատա-
րագի. առաքեալ զառա-

ջին մասն մարգարանին ․
ցի զուրախականն ․ խո-
նարհութբ ՚ի ծունկս անկ-
ցիս ․ և մատուսցես առ
որ ածածինն զասացեալ
հազար ողջոյն քեզ Մա-
րիամն ․ և զասացեալ հա-
զար օրհնութիւն ․ և ա-
ղաչեսցես զնա ․ զի մայ-
րենի իշխանութբ իւրով
՚ի նորածին մանկանէն յա-
մենաողորմելի որդւոյ իւրմէ
ընկալցի մզ քոյ իւր ՚ի հա-
տուցումն հազարացն, մի-
ային զերկու օրհնութիւս ․
զմինն ՚ի կենդանութե քում․
և զմիւսն ՚ի մահուանդ ։
Առաջնումն տացէ քեզ
շնորհ ճշմարտապէս զղջա-
լոյ ․ և ՚ի մեղաց հեռանա-

լոյ։ Իսկ երկրորդին ըզ-
փրկութին քո հաւատա-
լոյ։

ԱՂՕԹՔ, որում պարտին հաղոր-
դանել առ ամենասուրբ խորհրդոյն հա-
ղորդ ողջունին ասացեալք ՚ի
պատարագաւորութիւն առ որբոցն
ծնունդին քոյ։

Ո՜վ հզօր թագուհիդ հը-
րեշտակաց. արժանաւո-
րագոյն մայր Տեառն իմոյ. քաղց-
րագութ և ողորմած տի-
րուհի իմ. ես անարժան
ծառայ քոյ, (այս անուն)
խոնարհութ անկեալ առ-
ամենասուրբ ոտս քո աղա-
չեմ զքեզ, զի հաճիցիս ըն-
դունել յիմէն յաղօթից

մեղաւորէս զայսօրիկ հն-
գեակին խորհուրդս ուրա-
խականս ամենայնք վար-
դարանէին քո. և զհազար
ողջոյնսն հանդերձ օրհ-
նութեամբքն զմատուցեալսն
յինէն անարժանէս քոյին
մեծութեանդ. Ո՛րդ՝ աղա-
չեմ զքեզ զաղաղմանդութ
տիրուհիդ իմ, զի մայրե-
նի իշխանութեանդ ընկալ-
ցիս վասն իմ 'ի նորածին
որդւոյ քումմէ իբր 'ի հա-
տուցումն հազարացն՝ զեր-
կու օրհնութիւս միայն.
զառաջին՝ 'ի կենդանու-
թե իմում տայց ինձ ըզ
շնորհս ճշմարտապէս զըղ-
ջանալոյ. և զերկրորդն՝
'ի մահուան իմում հա-

ւաստի զփրկութի՛ն գտա-
նելոյ. ամէն։

# ՄԱՂԹԱՆՔ

Առ ամենօրհնեալ սբ
Ածածինն։

Տէր ողորմեա՛.
Քս ողորմեա՛։
Տր ողորմեա՛.
Քս լուր մեզ։
Քս անսա մեզ։
Հայր երկնաւոր Ած.
ողորմեա՛ մեզ։
Որդի՛ փրկիչ աշխարհի Ած.
ողորմեա՛ մեզ։
Հոգի՛դ սբ Ած.
ողորմեա՛ մեզ։
Սբ երրորդութի՛ւն մի Ած.

ողորմեա՛ մեզ։
Սրբուհի Մարիամ. բա-
րեխօսեա՛ վն մեր։
Սբ Ածածին. բարե։
Սբ կոյս կուսանաց. բարե։
Մայր Քնի. բարե։
Մայր Ածայինն շնորհաց.
բարե։
Մայր ամենամաքուր. բար։
Մայր ամենողջախոհ. բար։
Մայր անարատ. բարե։
Մայր անբիծ. բարե։
Մայր սիրելի. բարե։
Մայր սքանչելի. բարե։
Մայր ստեղծողին. բարե։
Մայր փրկչին. բարե։
Կոյս ամենախոհեմ. բարե։
Կոյս գերյարգոյ. բարե։
Կոյս քարոզելի. բարե։
Կոյս կարօղ. բարե։

Այս բարեգութ․ բարե։
Այս հաւատարիմ․ բարե։
Հայելի արդարութե․ բարե։
Աթոռ իմաստութե․ բարե։
Պատճառ մերոյ խնդութե․
բարե։
Անօթ հոգեւորական․ բար։
Անօթ պատուական․ բար։
Անօթ յարգական ջերմե-
ռանդութե․ բարե։
Վարդ խորհրդական․ բա։
Աշտարակ դաւթեան․ բա։
Աշտարակ փղոսկրեայ․ բա։
Պալատ ոսկեղէն․ բարե։
Տապանակ ուխտի․ բարե։
Դուռն երկնից․ բարե։
Աստղ առաւօտեան․ բար։
Առողջութի հիւանդաց․
բարե։
Ապաւէն մեղաւորաց․ բա։

Մխիթարիչ վշտացելոց · բարեւ

Օգնական քրիստոնէից · բարեւ

Թագուհի հրեշտակաց · բարեւ

Թագուհի նահապետաց · բարեւ

Թագուհի մարգարէից · բարեւ

Թագուհի առաքելոց · բա:

Թագուհի մարտիրոսաց · բարեւ

Թագուհի խոստովանողաց · բարեւ

Թագուհի կուսանաց · բա:

Թագուհի ամ̃ սր̃ց · բարեւ

Գառն ա̃յ . որ բառնաս զմեղս աշխարհի · անսա՛ մեզ տ̃ր :

Գառն ա՟յ , որ բառնաս
զմեղս աշխարհի .
լո՛ւր մեզ տ՟ր ։
Գառն ա՟յ , որ բառնաս
զմեղս աշխարհի .
ողորմեա՛ մեզ տ՟ր ։

## Աղօթք ։

ԱԾ , որ անճառելիդ ես ողորմութ՟բ . որ ոչ միայն մարդ , այլ և որդի մարդոյ լինել հաճեցար . և ծնանելով 'ի կուսէ՝ զմայր 'ի յերկրի ստացար, որ զա՟ծ ունէիր հայր 'ի յերկինս ։ Արդ՝ աղաչեմք տո՛ւր մեզ զյիշատակ ն՟ր ջերմեռան–դութ՟բ կատարել . զմայ–րութ՟ի ն՟ր գերագոյն յար–

զանօք պատուէլ . նորին
գերազանցագոյն վսեմու_
թեն զմեզ խոնարհութե՟
հպատակել. որ զքեզ հոգ_
ւով սրբով յղացաւ ըզ_
քեզ կուսութ͞ ծնաւ . և ըզ_
քեզ ՚ի յերկրի իւրեան հը_
[illegible]ակ կալաւ . զտ͞ր մեր
յի͞ քս͞, որ կենդանի ես .
և թագաւորես ընդ հօր
և ս͞բ հոգւոյն . ՚ի յաւի_
տեանս . ամէն ։

Աղօթք առ ս͞բ աստուածածինն մշ͞
[illegible] ։

Ամենաբարեգութ մայր
յո͞ի, կոյս մարիամ. ձեռն_
տու և նպաստ մեղաւո_
րաց . լի գթութե՟ ողոր_
մութե՝ հաս ՚ի թիկունս

ինձ

ինձ եղկելւոյս նախ քան
զժամանելն յանկարծա-
հաս և անակնունելի մահ-
ուան․ զի մի յանկարծա-
կի և անպատրաստ յաշ-
խարհէս յայսմանէ ելից։ Այլ
մ՟ծ չարչարանաց և մահ-
ուան միածնի որդւոյ քոյ
սիրեցելոյ պաշտպանեա և
խնամարկեա զիս․ զի հրա-
ժարեալ ՚ի մեղաց, և ՚ի
սատանայէ․ և հեռացեալ
՚ի գործոց ն՟ր, ճշմարիտ
զղջմամբ, մաքուր խոստո-
վանութ՟բ և արժանաւոր
ապաշխարութ՟բ հաշտե-
ցայց ը՟ր որդւոյ քում միա-
ծնի ՚ի փոխիլն իմ ՚ի կեն-
ցաղոյս։ Այլ արա առ իս
զողորմութ՟ն քո երանու-

հի մայր ա͞յ. 'ի ժամուն
յայնմիկ ահեղի, մինչ
շունչն իմ պակասեսցի. և
լեզուս կարկամեալ ոչ կա-
րասցէ բողոքել առ քեզ.
աչք իմ նուաղեսցին. և
լսելիք իմ խցեսցին. յայն-
ժամ յիշեա մայր անարատ.
զաղերսանս իմ, զորս այժմ
գթուն քում մայրականի
վերանուիրեմ. և հաս ինձ
'ի յօգնութի 'ի վերջին ժա-
մուն յայնմիկ նեղութե. զի
զերծայց 'ի հրեշտակացն
չարաց. և 'ի սպասաւորացն
սատանայի. և դասեցայց ընդ
հաւատացելոցն քո. ընդ ծա-
ռայս և ընդ բարեկամս որդ-
ւոյ քո. որ է օրհնեալ 'ի յա-
ւիտեան. ամէն:

Աղօթք և երգք զանազանք քաղեալք 'ի հոգևոր գրեանց. 'ի պէտս երեխայից.

✠

Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես. Սուրբ եղիցի անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. Եղիցին կամք քո. որպէս յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ

'ի փորձութ՟ն․ այլ՝ փրկեա՛ զմեզ 'ի չարէն․ զի քո է արքայութ՟ն․ և զօրութ՟ն․ և փառք յաւիտեանս․ ամէն։

Ողջոյն քեզ Մարիամ․ լի շնորհօք․ Տ՟ր ընդ քեզ․ օրհնեալ ես դու 'ի կանայս․ և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յ՟ս․ սրբուհի Մարիամ մայր Ա՟յ․ բարեխօսեա՛ վ՟ն մեր մեղաւորացս․ այժմ, և 'ի ժամու մահու մերոյ․ ամէն։

## Հանգանակ Նիկիական։

Հաւատամք 'ի մի Ա՟ծ․ 'ի Հայրն ամենակալ․ յարարիչն երկնի և երկրի․ ե-

րևելեաց, և աներևութից։
Եւ 'ի մի տր յս քս. յոր-
դին այ. ծնեալն յայ հօ-
րէ միածին. նախ քան
զամ յաւիտեանս։ Ած
յայ. լոյս 'ի լուսոյ. ած
ճշմարիտ. յայ ճշմարտէ
ծնունդ և ոչ արարած։
Նոյն ինքն համագոյակից
հօր. որով ամ ինչ եղե-
յերկինս և 'ի վր երկրի.
երևելիք և աներևոյթք։
Որ յաղագս մեր մարդ-
կան. և վս մերոյ փրկու-
թե իջեալ 'ի յերկնից. մարմ-
նացաւ. մարդացաւ. ծնաւ
կատարելապէս 'ի մարիա-
մայ սբյ կուսէն. հոգւով
սրբով. որով էառ մարմին.
հոգի. և միտ. և զամ որ

ինչ

ինչ է 'ի մարդ. ճշմարտապէս. և ոչ կարծեօք։ Չարչարեալ. խաչեալ. թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն. և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս. և զմեռեալս։ Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին. յանեղն և 'ի կատարեալն. որ 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս. և յաւետարանս։ Որ էջն 'ի յորդանան. քարոզեաց զառաքեալն. և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք

և 'ի մի միայն յընդհան-
րական և յառաքելական
եկեղեցի ։ 'ի մի մկրտութի̃ ·
յապաշխարութի̃ · 'ի քա-
ւութի̃ · և 'ի թողութի̃ մե-
ղաց · 'ի յարութի̃ մեռե-
լոց · 'ի դատաստանն յա-
ւիտենից հոգւոց և մարմ-
նոց · յարքայութին երկնից ·
և 'ի կեանսն յաւիտենականս ։

Խոստովանիմ առաջի ա̃յ
ամենակալի · և երանուհի
սր̃ ա̃ծածնին, և միշտ կու-
սին Մարիամու · երանել-
ւոյն միքայելի հրեշտակա-
պետին · երանելւոյն յով-
հաննու մկրտչին · սրբոց
առաքելոցն պետրոսի և
պօղոսի · և սբ̃յ հօրն մե-

րոյ գրիգորի լուսաւոր-
չին. և տմ սբյ. (և առա-
ջի քո հայր նր.) քանզի
մեղայ յոյժ. խորհրդով,
բանիւ, և գործով. վայ
ինձ. վայ ինձ. և յաւէտ
վայ ինձ։

Վն որոյ աղաչեմ զերա-
նուհի միշտ կոյս մարիամն.
զերանելի միքայէլ հրեշ-
տակապետն. զերանելի
յովհաննէս մկրտիչն. զսբ
առաքեալսն պետրոս և պօ-
ղոս. և զերանելի հայրն
մեր զսբն գրիգոր լուսա-
ւորիչն. և զամ սբս. և
զձեզ եւս եղբարք. աղօ-
թել վս իմ առ տր ած
մեր։

Գոհանամ զքէն տր իմ

և ա՛ծ իմ՝ 'ի բոլոր սրտէ
իմմէ. և յա՛մ մտաց իմոց.
զի 'ի գիշերիս յայսմիկ ար-
ժանի արարեր զիս պահել
և պահպանել. ոչ յաղագս
բարեգործութե՛ իմոյ. զի
ստուգիւ մեղաւոր եմ ես.
այլ վա՛ մեծի գթութե՛ և
բարերարութե՛ քո: Ա՛սո-
րոյ խոնարհութբ՛ աղաչեմ
զքեզ. տո՛ւր ինձ զմեծա-
գին շնորհ քո Տ՛ր. զի ա-
ռանց նորա ոչինչ կարեմ
առնել: Ա՛պ զի նովաւ կա-
րասցես կառավարել զիս
այսօր 'ի փառս ա՛ծային
մեծ վայելչութե՛ քո. 'ի
փրկութի՛ հոգւոյ իմոյ. և
'ի յօգուտ մերձաւորաց ի-
մոց: Թ՛.յլ և օգնական լեր

ինձ. ով քաղցր տէր իմ. զի կարացից այսուհետեւ սկսանիլ զբարիս խորհիլ. խօսիլ. եւ գործել. եւ փոխել զկենցաղավարութիւն իմ անպատեհ. եւ առնել զամենայն ինչ այսօր, եւ ՚ի բոլոր կեանս իմ. ՚ի պատիւ եւ ՚ի փառս ամենասուրբ անուան քոյ. ամէն:

Աղօթք յառաջ քան զհաղորդութիւն.

Աստուած ամենակալ. որ ՚ի վերոյ ես քան զամենայն գոյութիւնս. ինքնագոյ ամենիմաստ, ամենաբարի. ամենասուրբ. ամենողորմ. եւ ամենակատար զօրութիւն:

Փառաւորեմ. և օրհնեմ
զքեզ յիմ՝ անձնէ և յիմ
զօրութենէ իմմէ. 'ի մերոյ
քան զամ՝ ինչ: Ո՜ որոյ
սուրբ՝ զղջացեալ ցա-
ւիմ, զի բազմութի̃ մե-
ղաց իմոց զոծայրն մեծ-
վայելչութի̃ քո 'ի զայրա-
ցուցին ա̃ծ: Այս իսկութ̃
ապաշաւեալ այնչափ ա-
տեմ զմեղս իմ, զորս գոր-
ծեցի, մինչև 'ի լինիլ ինձ
յայժմայս առաջիկայ 'ի
գործել. ոչինչ կերպիւ
տայի ոչ զհաւանութի: Եւ
արդ քանզի դու միայն ես
հայր գթութեց և ա̃ծ ողոր-
մութեց վ̃ն որոյ խնդրեմ ա̃մ
խոնարհութ̃ տալ ինձ ըղ-
քաւութի̃ և զթողութի̃

յանցանաց իմոց։ Եւ ոչինչ
երկբայիմ ընդունել զնոյն
առ՚ի քէն. քանզի զհեղումն
արեան միածնի որդւոյ քոյ
միջնորդ ունիմ առ քեզ վ̃ն
իմ։ Ապա հաստատուն յա-
ռաջադրեմ, այսուհետեւ
զոր պատուիրանս քո պա-
հել անթերի յա̃մ սրտէ
իմմէ։ Փախչել՚ի պատճա-
ռաց մեղանչելոյ. ատել
զցաւագին և զկատարեալ
խոստովանութ՚ի մեղաց ի-
մոց. և վճարել ամբողջ
զապաշխարանսն եդեալ
վ̃նց՚ի վ̃ր իմ։ Իսկ արդ
զկատարումն այսր ա̃մի՚ի
քեզ ապաստան արարեալ.
ընծայեմ զիս գլխովին քեզ
արարչիդ իմում ընդ ա̃մ

գործոց և կարեաց իմոց. զի գթութե՛ ընկալեալ զնա՛ 'ի միութի՛ արդեանց սիրեցելոյ որդւոյ քո տն մերոյ յի՛ք քի՛. փոխարկեսցես զիս 'ի նա : Տուր ինձ տէ՛ր, զի յայսմհետէ զինչ և դիպեսցի ինձ 'ի ձախորդութե՛ց, տարայց նց՛ համբերութե՛ 'ի փառս եռամեծ ամենասր՛բ անուանս քոյ. որում զիս խոստովանեալ նուիրեմ ծառայ մշտնջենաւոր :

Դարձեալ աղօթք յառաջքան զխոստովանութիւն :

Ով բարեգութ տէր իմ յս՛ քս՛. աղաչեմ զքեզ. պա-

դատիմ առ քեզ յամ
սրտէ, և յամ մտաց իմոց.
ընկալ զխոստովանութիւն
իմ, զոր կամիմ առնել
այսօր առաջի քո. և տուր
ինձ զճշմարիտ զղջումն ի
ամ մեղաց իմոց։ Ո՛վ ա-
մենաքաղցր Տէր իմ յս քս.
ծագեա՛ 'ի հոգի և 'ի միտս
իմ՝ զլոյս ճշմարտութե քո.
առ 'ի յիշել և ճանաչել զամենայն
զմեղս իմ. և զյանցանս,
զորս պարտիմ խոստովա-
նիլ առաջի քո։ Նաև
ուսանիլ ինձ նովիմ լուսով
թէ որպէս պարտ է լուծանի-
րոյ, և ջերմեռանդութեամբ
մատչիլ 'ի յահաւոր խոր-
հուրդն ապաշխարութե։

Աղօթք յառաջ քան զհաղոր-
դութիւն ։

Ո՜վ Տ՟ր իմ յ՟ս ք՟ս · ստու-
գիւ խոստովան լինիմ, զի
չեմ բաւական ընդունիլ
զքեզ · այլ այն միայն կարեւո-
րութե՟ իմոյ յորդորիմ գալ
առ քեզ · այլ զի հիւան-
դութի՟ իմ քեւ բժշկեսցի ·
խաւար մտաց իմոց քեւ լու-
սաւորեսցի · աղքատութի՟
իմ քեւ հարստասցի · եւ բա-
րեգործութի՟ իմ քեւ ար-
դիւնաւորեսցի · ամէն ։
Յիշեա՛ այլ Տ՟ր իմ յ՟ս ք՟ս ·
զի եսուր զքեզ ՚ի միահ մ՟ն
իմ · եւ զկենարար մարմին
եւ զարիւն քո բաշխեցեր

’ի կենդանութեան վասն իմ։
Տէր՝ արա՛ ո՛ղ զի եղիցին
ողքա ’ի քաւութեան և ’ի թո-
ղութեան մեղաց իմոց․ և մի՛
’ի դատապարտութեան հոգ-
ւոյ իմոյ։ Ու զի ողջօք ար-
ժանաւորեցայց պարգևից
եղեալ սրբոց քոց․ երանե-
լի լինել տեսութեան փառաց
քոց։

Աղօթք սրբոյն Օգոստինոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս․ տուր ինձ,
զի ճանաչեցից զիս․ և ճա-
նաչեցից զքեզ․ մի՛ այլում
ցանկացայց, բայց եթէ
քեզ․ ատեցից զիս․ և սի-
րեցից զքեզ․ խոնարհե-
ցուցից զիս․ և բարձրա-

ցուցից զքեզ. մի՛ խորհե-
ցայց զայլ ինչ, բայց ե-
թէ զքեզ. մեռուցից զիս.
և կենդանացայց ՚ի քեզ։ Որ
ինչ և դիպեսցի ինձ, ըն-
կալայց իբր առ՚ի քէն. հա-
լածեցից զիս. և գնացից
զհետ քո. և միշտ ցան-
կացայց լինել զկնի քո։
փախեայց յինէն. և դի-
մեցից առ քեզ. և արժա-
նի եղէց ը̃ունել զպաշտ-
պանութիւն քո. երկեայց
՚ի յիս. և ակնածեցից ՚ի
քէն. և եղէց ՚ի յընտրե-
լոց քոց։ Հակառակեցայց
ինձ. և միաբանեցայց ը̃
քեզ. և յանձն առից ըզ
հնազանդութիւն մ̃ծ քո։
Այլ ինչ ինձ ախորժ թուես-

ցի, բայց եթէ դու ։ Նայ֊
եա՛ց առ իս, զի սիրեցից
զքեզ․ կոչեա՛ զիս․ զի տե֊
սից զքեզ․ և ՚ի յաւիտեան
զմայլեցայց քև․ ամէն ։

## Աղօթք զկնի հաղորդութեան ։

Ո՛վ Տէր իմ Յիսուս Քրիստոս․ հաց
կենդանի՝ կենագործօղ
աղբիւր մարդկան․ գոհա֊
նամ զքէն ՚ի վերոյ քան
զամ, զի արժանի արարեր
զիս զմեղաւորս շնորհօք
մարդասիրութեան քո․ ար֊
տաքոյ ամենայն արդեանց ի֊
մոց, հաղորդիլ ամենամաքուր
մարմնոյ և արեան քո ։
Արդ՝ աղաչեմ զքեզ լիցի
ինձ սա զէն հաւատոյ․ վա֊

հան ամրութեն կամաց ի-
մոց • համբարձումն սրտի
և մտաց լնոց առ քեզ •
լռումն ձայնին սիրոյ քո •
'ի բաց լքումն իմ մոլու-
թեց • և 'ի ծաղկումն իմ
առաքինութեց ։ Ներ-
կեանութի 'ի շաւիղս բա-
րեգործութե • և ազատու-
թի յիմ փորձութեց • զի
քև , 'ի շաւիղս քո պան-
ծացեալ , անձապարեցից
յերկնային հարսանիսն քո •
խնդակից լեալ քոյոց սի-
րելեաց • զի դու ես լոյս
ճշմարիտ • կեանք • քաղց-
րութի • և յոյս մեր •
ամէն •

Տաղ մարմնոյ եւ ա-
րեան տ̃ն ։

Երգեա՛ լեզու զփառա-
ւորի․
զխորհուրդ մարմնոյ տ̃ն
յ̃սի ։
Եւ եւ արեան պատուա-
կանի ․
զոր 'ի գին հանուր աշ-
խարհի ․
Պտուղն արգանդի հզօ-
րեղի ․
արքայն եհեղ մարդկան
ազգի ։
Օ ի մեզ տուաւ ․ եւ մեզ
ծնաւ ․
որ 'ի կուսէն ներմարդա-
ցաւ ։

Նա յաշխարհէ պանդխ-
տեցաւ.
ուր սերմն բանին սփռե-
ցաւ:
Կերպն՝ յոր կենցաղավա-
րեցաւ.
Հրաշիւք մեծաւ պար-
փակեցաւ.
Յերեկոյին ընթրեաց մե-
ծի.
Ը աշակերտըս իւր բազ-
մի:
Նշով զօրէնս վաղնջա-
կանս.
՚ի կերակուրս օրէնա-
կանս.
Որոց զմարմին իւր յու-
տելի.
Եւ զարիւն իւր տայ յըմ-
պելի:

Բանն մարմին զհաց ճըշ-
մարտի՛ն.
առնէ մարմին իւրով բա-
նի՛ւ.
Ր. յւ և զգինին նովիմբ
արիւն.
Թէպէտ նուա̂ղի զգայու-
թի՛ն:
Ի հաստատել զսիրտ ա-
նարատ.
բաւական է միայն հա-
ւատ:
Օայսքան արգոյ սրբազ-
նութի՛.
մեր՛ն յարգիցէ նուա̂ս-
տութի՛ն:
Քանզի ուսումն հնոյ կը
տակի.
նորոյս կարգի տայցէ տե-
ղի՛:

Շնորհէ հաւատ գլխու-
թե՛ն.
յորում նուաղի զգայու-
թի՛ն.
Անողին և ծնեցելոյն.
տացի գովու՛ն մեհագայն:
Պատիւ և երկրպագու-
թի՛ն.
համայն և բարեբանու-
թի՛ն:
Ծնողին խոկ 'ի յերկո-
ցունց.
զուգածայն լիցի գոհու-
թի՛ն. Ամէն:

Աղօթամատոյց հօր աղօթք յա_ղագս խոստովանչէաց մեղաց չարչարանացն քոց :



Աստուած, որ վ՛ն փրկութեան աշխար_հի կամեցար ծնանիլ. թլփատիլ. 'ի հրէից խոտիլ. 'ի յուդայէ մատնչէ համ_բուրիւ մատնիլ. կապա_նօք կապիլ. իբրեւ զգառն անմեղ 'ի զենումն ածիլ: Նաեւ առաջի աննայի եւ կայիափայի, պիղատոսի եւ հերովդէի անպատկանա_բար ածիլ. սուտ վկայիւք

ամ

ամբաստանիլ. ձաղանօք և նախատանօք կոչկոճիլ. Թքովք անարգիլ. փշովք պսակիլ. եղեգամբ հարկանիլ. երեսօք ծածկիլ. 'ի հանդերձից մերկանալ. 'ի փայտ մահու բևեռօք պնտիլ. 'ի խաչին բարձրանալ. ընդ աւազակս համարիլ. լեղեաւ և քացախով զովանալ. և տիգաւ վիրաւորիլ: Դու՛ որ 'ի ձեռն այսոցիկ սրբազան պատժոց քոց, զորս ես անարժանս պատուեմ. և 'ի ձեռն սրբոյ խաչին և մահու քոյ, ազատեա՛ զիս 'ի պատժոց դժոխոց:

Աղօթք հնգից հինգերորդ ժամ ·

Զեղութիւն հոգւոյ ան-
կեալ առ սրբազան ոտս
քո ո՛վ բարի յս̃ · աղեր-
սանօք մաղթեմ 'ի քէն ·
բժշկեա՛ 'ի սրտի խմում
զհինգ առաքինութիւնս զայ-
սոսիկ · զհաւատ · զյոյս ·
զսէր · զապաշխարութի՛ւ ·
և զյառաջադրութի՛ւ ոչ
երբէք մեղանչելոյ ընդ-
դէմ ա̃ծային հրամանաց
քոյ ։

Աղօթ վերջ աղօթ ժամուն ժամի ։

Աղաչեմ զքեզ լութի՛ւ
անհնչամանաց սրտի իմոյ ո՛վ
բարի յս̃ · շնորհեա՛ ինձ
միջնորդութի՛ւ վերեաց աջոյ

ձեռին քո, զհաստատու-
թին հաւատոյ. քանզի ահա
ուխտեմ հաւատալ զա̃մ
յօդուածս քրիստոնէա-
կան հաւատոյ. և պատ-
րաստեմ զիս մ̃ն այնր հա-
ւատոյ հեղուլ զարիւն իմ.
մ̃ն զի ծնեալ եմ 'ի սրբա-
զան հաւատս յայս. 'ի սմին
սնեալ եմ. և 'ի սմին կամիմ
մեռանիլ:

Առ վէրս ձախոյ ձեռինն նորա:

Միջնորդութ̃բ սրբազան
ձախոյ ձեռին քոյ խո-
ցեցելոյ աղաչեմ զքեզ՝ ով
բարի յս̃. ամենայն զյոյս
փրկութե̃ իմոյ հաստատե-
ցելոյ 'ի քեզ: Օրհնեալ
լիցի բարեգթութի̃ քո.

որ միշտ բաղձալերես զիս 'ի յընդունիլ զթողութին մեղաց իմոց . ոչ երբեք դադարեցայց 'ի պատմելոյ զողորմութին քո . զի լուացեր զիս պատուական արեամբ քով . և ետուր զանձն քո 'ի մահ վս սիրոյ իմոյ : Արդ տուր ինձ զայս կատարեալ , զի 'ի քեզ միայն ապաւինեցայց :

Աղօ. վերջին աղօթոյ տօթին ժամն :

Միջնորդութեամբ սրբազան աջոյ կողին քո խոցեցելոյ ով բարի յս . ուղղեա զիս 'ի ճանապարհս ածային սիրոյ քո . քանզի կամիմ սիրել զքեզ մինչև յաւիտեան . ոչ միայն վս

բարերարութեանն, զոր ինձ
արարեր, այլ և վասն քոյին
գերափառութեան. և զի դու
առաջեր. որ սիրէ զիս, սի-
րեացի 'ի հօրէ իմմէ:

Աղ~ Ձեռք յանկոյց ոտին գոն՛:

Ամենողորմութեան սրբազան
ձախոյ ստին քո խոցե-
ցելոյ ով բարի յս. շնոր-
հեա ինձ զզղջումն մեղաց
իմոց. վա՜յ է ինձ եղկել-
ւոյս. երանի թէ ոչ եր-
բեք անզգամեալ էի առա-
ջի քոյ. բայց դու ով տէր
իմ անոխակալ. տուր ինձ
զարտասուս մաքսաւորին.
և զզղջումն պոռնկին. զի
լացից զտիւ և զգիշեր վասն
թշուառութեան իմոյ:

### Առ վէրս աջակողման կողին Յսի։

Որդ՝ ո՞ւր գտանեմ ես զհանգիստ մտաց, եթէ ոչ ՚ի խոցուա՛ծս որբազան կողին քո՝ ով բարի յս։ Նս ցարդ ապաստանեցայ ՚ի քոյին սբ̄ պատուիրանաց· բայց այժմ դառնամ առ քեզ ո̄պ զանառակ որդին· և յառաջադրեմ այսուհետև փախչել ՚ի մեղաց· և գործել զարդարութիւն։ Որդ՝ արա առ իս զքոյին երկայնմտութիւն· որ համբերեցեր վ̄ս իմ ՚ի վերայ խաչին։

Երգ առ ՚ի տօնախմբութեան յաւա_
գէն Չ՚ն չարչարանաց Տեառն
որդւոյ Նորոյ :

Կայր առ խաչին մայր
ցաւագին.
արտասուալից և տրտ_
մագին.
մինչ էր զփայտէ կախեալ
որդին:
Ընդ սիրտ նորա յոյժ տառա_
պագին.
հառաչանօք կոծելով ուժ_
գին.
ընդ մէջ էանց սուր երկ_
սայրին:
Օ քա՜րդ թախծեալ և վշ_
տագին.
էր մարիամ երանելին.
մայրն յոլի մին միածնին,

Որ վշտանայր և աշխա-
րէր ·
յոյժ դողացեալ մինչ տե-
սանէր ·
'ի գանս զորդին որ ազ-
նիւն էր :
Ո՞րպիսի սիրտ կարծր ոչ
ողբայր ·
թէ տեսանէր զՔրիստոսի մայր·
որ 'ի տանջանս համբեր-
մամբ կայր :
Ո՞վ կարէր գոլ ոչ տրտ-
մակից ·
բարեպաշտի մօր ողբա-
կից ·
որ միածնին էր ցաւակից:
Վասն մեղաց ազգին հարեն·
Ետես զՅս՜ 'ի գանս մատ-
նեալ ·
և տանջմանց հնազանդեալ:

Նստեա՛ զորդին իւր սիրե-
լին ․
մեռեալ անստես եղեալ
բնաւին ․
մինչ արձակեաց ըզիւր
հոգին ։
Մա՛յր խոկուհի աղբիւր սի-
րոյ ․
տո՛ւր զօրութի՛ ցաւոց ըզ-
գալոյ ․
Ը՟ քեզ հեղուլ զարտօսր
լալոյ ։
Տո՛ւր զի սիրտ իմ բորբո-
քեսցի ․
՚ի քո՛ի սէրն վառիցի ․
զի ընդ անձն իմ առ հա-
ճիցի ։
Մայր սրբուհի զայն կա-
տարեա՛ ․
զխաչեցելոյն զվէրս տնկեա՛ ․

յիմում սրտի զնոյնս բե_
ւեռեա՛ ։

Որդւոյ քոյին խոցեցելոյ ·
այդչափ վա՛ իմ չարչարե_
լոյ ·
զանիցն զիս մասնակցեա՛ ։

Տո՛ւր ինձ լինել քեզ ող_
բակից ·
խաչեցելոյն գոլ ցաւա_
կից ,
՚ի կենցաղումս որչափ կե_
ցից ։

Մերձ առ խաչին ը՟ քեզ
մնալ ·
յօժարութ՟ ընկերանալ ·
՚ի միասին ցանկամ ողբալ ։

Կոյս կուսանաց ազնուա_
գին ·
մի՛ լինիր ինձ արդ դառ_
նագին ·

այլ տո՛ւր ընդ քեզ գու-
ողբագին :
Տո՛ւր քո՛ւ զխաչն կրել·
չարչարմանց բախտն յի-
շել·
զվէրս նորին միշտ մտա-
ծել:
Տո՛ւր ինձ գանիւք վիրա-
ւորիլ:
այսու խաչիւ՛ արբեալ
լինիլ·
ի՛ն սիրոյ որդւոյդ խաչիլ:
Վառեալ սիրով և բոր-
բոքեալ·
քեւ կոյս եղէց ամրափա-
կեալ·
դատաստանի յօրն հա-
սեալ:
Տո՛ւր ինձ խաչիւ՛ ամբողջ
պահիլ·

մահուամբ ո՛րն պատա-
պարիլ.
շնորհեա՛ նորէն միշտ ջե-
ռանիլ։
Մինչ մարմինն իմ մեռա-
նիցի.
հոգւոյս իմոյ քեւ շնոր-
հիցի.
փառաց դրախտին, զի
զմայլիցի. ամէն։

Երգ առ չարչարանսն քսի. Նա
առ ձբ խաչ նբ.

Նայեա՛ նշանն թագաւո-
րին.
փայլէ պայծառ խորհուրդ-
խաչին.
քո՛ մարմնոյն կուսածին.
մերկ կախեցաւ վ՛ր խաչին։

Որ խոցեցաւ սուր սլաքով·
տիգաւ զկողն բանալով·
կայլակ արեան իւր բղ-
խելով·
զմեզ ՚ի մեղաց լուանալով։
Կատարեցաւ երգն դաւ-
թի·
Հաւատարիմ մարգարէի·
որ գուշակեաց մարդկան
ազգի·
Թագաւորեաց ա՟ծ խա-
չին։
Ծառ գեղեցիկ փայլելա-
կան·
ազնուեալ ծիրանեաւ ար-
քունական·
՚ի մէջ տնկոց եղեր ար-
ժան·
բառնալ զմարմին տ՟րու-
նական։

Օրհնեալ բազկաց քոց երամի·
յոր կախեցաւ գինն աշխարհի·
եղեր կշիռ ն̃ն մարմնի·
առէր զաւար տարտարոսի։
Ողջոյն ո՜վ խաչ մեզ յոյս միայն·
ամբիծ գառինն ո՛ր զենարան·
յաւել զնեցն արդարութ̃ի·
պարտաւորաց տալ թողութ̃ի։
Ո՜վ գերագոյն երրորդութ̃ի·
տացէ յոգւոց քեզ գոհութ̃ի·
զորս խորհրդով ս̃յ խաչին·

փրկեալ ջաղխեա՛ զթշնա-
մին • ամէն ։

Երգ յարութ՟ե ձ՟ն մերոյ
յոե ժոե ։

Ալէլուիա • ալէլուիա •
ալէլուիա ։

Ո՛վ նորածին որդիք լուսոյ •
արքային փառաց ո՛րն յու-
սոյ •
յարեաւ որպէս բողբոջ
բուսոյ ։ Ալէլուիա • ա-
լէլ• ալէլ
Ի խաշաքաթ այգոյ զատ-
կին •
Ի դուռըն ո՛ք գերեզման-
նին •
աշակերտաց հոյլք մատ-
չէին ։ Ալէլ• ալէ• և այլն ։

Իսկ մարիամ 'ի մագդա_
ղենայ ․
որ յակոբայն ընդ սողո_
մեայ ․
եկին խնկել զմեռեալ
որդայ ։ Ալէլու․ և այլն ։
Ձորձ սպիտակ զգեցեալ
հրեշտակ ․
փողէր կանանց իբր ա_
ւետակ ․
ընդ ալէլուիա տայր նոյա_
տակ ։ Ալէլուիա ։
Իսկ յօհաննէս սիրոյ հա_
տոր ։
քան զպետրոս փութայր
յորդոր ․
տեսեալ շիրիմըն վիմա_
փոր ։ Ալէլուիա ։
Խմբից մաքուր աշակեր_
տաց ․

յա՛նկարծ տէրըն 'ի մէջ եկաց ։
խաղաղութի՛ւն ընդ ձեզ ա-սաց ։ Ալէլուիա ։
Նաև երկոտասանեակն նոքօք լու՛-եալ ։
Թէ տէր յա՛ է յարուցեալ ։
եկաց ընդդէմ իբր երկ-ո՛ւացեալ ։ Ալէլուիա ։
Արդ դու Թովմաս տես ըզ-կողս իմ ։
խոցեալ զձեռս՝ ծակեալ զոտս իմ ։
Լիջէ՛ր լաօղ հաւատարիմ ։ Ալէլուիա ։
Յորժամ զտէրն ետես Թօ-մաս ։
զձեռս և զոտս՝ ըզկողըն բաց ։
տէր և Աստուած իմ ես գոչեաց ։

Ալէլուիա ։
Այլ երանի, որք ոչ տե-
սին.
քան զտեսօղսն հաւատա-
ցին.
զի ն̃ց կեանքն աղբիւրա-
ցին ։ Ալէլուիա ։
Յայսմ տօնի տ̃ե յարուե̃.
տայցուք պաշտօն ա̃ծուե̃.
օրհնել ձայնիւ̂ փառա-
ւորութե̃ ։ Ալէլուիա ։
Եկա՛յք հա՛պա մեք միա-
բան.
Ջերմ̃ն սիրով խոնարհա-
կան.
շնորհ կալցուք եին ար-
ժան ։ Ալէլուիա ։

Երգ գալստեան հոգւոյն սրբոյ։

Ա՛կն ուր հոգի ստեղծող էից·
յայց ե՛ր մտաց քոց ծառայից·
և վերնական շնորհօք քո լի՛ց·
ըզքո ստեղծեալ սիրտ բոլորից·
Մխիթարիչդ անուն·
և բարձրելոյն պարգև բարի·
աղբիւր կենաց հուր կենդանի·
սէր և օծումն իմանալի։
Դու եօթնորդեան շնորհք վերին·
մատն հայրական աջոյ ձեռին·

դու աւետիք հօր բարձ-
րելոյ,
որ տաս բարբառըս բե-
րանոյ:
Առեա՛ զլոյս՝ի զգայարանս·
հե՛ղ զսիրոյ քո զհոսանս·
զտկարու՝ի մարմնոյ մերոյ·
միշտ զօրութ՟ քո ամրացո՛:
Ի բա՛ց վանեա զ՚թշնամու՟ն:
և պարգևեա՛ զխաղաղու՟ն:
զի քև յաւէտ առաջնոր-
դեալ·
առ՝ի չարեաց լիցուք զեր-
ծեալ:
Տո՛ւր Ճանաչել մեզ քև
զհայր·
և զմիածին իւր հաւա-
սար·
և յերկոցունցդ զհոգիդ
բղխեալ·

յամ

յա՛մ ժամ սերտ հաւա֊
տալ։
Փառք պատի՛ւ հօր ա՛յ·
և միածնին յարուցելոյ·
Հոգւոյն սբյ մխիթարչի·
այժմ և յաւէտ անլռելի·
ամէն։

Երգ առ հոգին սբ ձն մաղ֊
թելոյ [illegible] [illegible]։

Հոգի՛դ ա՛ծ քաղցրահայ֊
եաց·
նախախնամօղ տիեզերաց·
տուօղ բարեաց և պար֊
գևաց·
մխիթարիչ թախծեալ
անձանց։
Ոադեա՛ ՚ի մեզ ըղձից շը֊
նորհաց·

և փարատեա՛ զխաւար մտաց·
զմեզ մաքրեա՛ յաղտոյ մե-
ղաց·
տաճա՛ր կազմեա ո̃նդ փա-
ռաց։
զմեզ ամրացո՛ ը̃դդէմ դի-
ւաց·
տո՛ւր զյաղթութիւն 'ի
թշնամեաց·
լե՛ր ապաւէն յաւուր չա-
րեաց·
տո՛ւր ընթանալ զհետ քո
շաւղաց։
Սառեա՛ զսէր ո̃բ բաղ-
ձանաց·
և ընդ նմին զսէր ընկե-
րաց·
տո՛ւր հետևիլ գործոց
բարեաց·
զօրս կատարել աւուրց մեզց·

Յորժամ հասցէ զրաւ կենաց.
զերծո՛ զմեզ յայսոց չարաց.
փոխեա՛ ի յարկս երանելեաց.
օրհնել զքեզ ընդ հակցացդ. ամէն:

Երգ գոհացողական վ̃ պարգևաց ընդունելոյ յ̃յ:

Քեզ ա̃ծ օրհնաբանեմք.
զքեզ համայնից տ̃ր դաւանիմք.
Քեզ պաշտէ երկիր համայն.
Հայր անսկիզբն և անվախճան:

Քեզ հրեշտակաց զօրք ա-
մենայն ·
երկինք և պետք միան-
գամայն :
Չորք քրովբէից, և սրով-
բէից ·
երգեն միմեանց լեալ ձայ-
նակից :
Սուրբ սուրբ սուրբ մի տէր զօրութեանց ·
ըստ եսայեայ նախատեսութեանց :
Լի են երկինք երկիր
քոյովք ·
վայելչութեան մեծի փառօք :
Օ քեզ փառաւոր դասք
ընտրելոց ·
երկոտասան առաքելոց :
Թիւ գովելի մարգարէից :
անօրէնութեան նախատեսից :
Երամ պայծառ մարտի-
րոսաց ·

գովեն երգով զո՛րդ փա-
ռաց ։
Եկեղեցի ո՛ր դաւանի ·
զքեզ մինչեւ 'ի ծագս երկ-
րի ։
Ո՛հայր անբաւ վայելչու-
թե՛ ·
և զմիածին նոյնոյ բնու-
թե՛ ։
Ո՛ր հոգին բնութենա-
կից ·
մխիթարիչ քրիստոնէից ։
Դու ես քո՛ փառաց արքայ ·
և միածին հօր մշտակայ ։
Դու 'ի փրկել զմարդ հո-
ղածին ·
խոնարհեցար յարգանդ
կուսին ։
Դու կոխելով զմահու խայ-
թոց ·

բացեր զերկինս մկրտելոց։
Ընդ աջմէ հօր 'ի փառս
բազմեալ․
դատաւոր ես գալոց ապա-
սեալ։
Աղթեմք օգնել ծառայից
քոց․
զորս փրկեցեր արեամբ
գնոց։
Փառաւորեա զմեզ յաւի-
տեան․
ընդ սըբս քո յարքայութե՛ն։
Զժողովուրդ քո ազա-
տեա․
զժառանգութի՛ւն քո տէր
օրհնեա։
Հովուեա զնոսա միշտ անսա-
սան․
և բարձրացո 'ի յաւի-
տեան։

Զքեզ օրհնեմք զօրն ան-
դադար.
զանուանդ գովեմք միշտ
անսպառ։
Շնորհեա՛ այսօր տէրդ դը-
թած.
պահել զմեզ առանց մե-
ղաց։
Ողորմեա՛ց մեզ տէր ողոր-
մեաց.
և հայրախնամ աչօք նայ-
եաց։
Ողորմութիւնդ ընդ մեզ
լիցի.
յոյս մեր ՚ի քէն մի վրի-
պեսցի։
Քեզ ապաստան եմք ա-
պաքէն։
մի ամօթով լիցիմք ՚ի
քէն։

Քեզ փառք տացի ձայնիւ երգոց ·
՚ի յերկնայնոց, և յերկրայնոց :

## ՎԱՍՆ ԱՌԴ

Քո՛ ննջեցելոց :

Աղաչանք ձն Թաւելոյ :

Տէր ողորմեա՛ :
Քո՛ ողորմեա՛ :
Տէ՛ր ողորմեա՛ :
Քո՛ լո՛ւր մեզ ·
Քո՛ անսա՛ մեզ :
Հայր երկնաւոր ած ·
ողորմեա՛ց ամ հաւատա-
ցեալ ննջեցելոց ·
Որդի՛ փրկիչ աշխարհի ած

ողորմեայ մմ հաւատամ.
Հոգիդ սբ ած. ողորմեա։
Սբ երրորդութիւն մի ած. ողորմեայ։
Սրբուհի մարիամ. բարեխօսեա վս հաւատացել ննջեցելոց։
Սբ ածածին. բարեխօս։
Սբ կոյս կուսանաց. բարե։
Սբ միքայէլ. բարե։
Ամ սբ հրեշտակք և հրեշտակապետք. բարեխօսեցէք վս հաւատացեալ ննջեցելոց։
Սբ յովհաննէս մկրտիչ. բարե։
Սբ պետրոս. բարե։
Սբ պօղոս։ բարե։
Սբ յովհաննէս աւետարանիչ. բարե։

Ա.մ ս̃բ առաքեալք և ա_
ւետարանիչք · բարե_
խօսեցէք ։

Ս̃բ ստեփաննոս · բարե։

Ս̃բ լաւրենտիոս · բարե։

Ա.մ ս̃բ մարտիրոսք · բա_
րեխօսեցէք ։

Ս̃բ գրիգոր հռոմայ հայ_
րապետ · բարե։

Ս̃բ գրիգոր լուսաւորիչ ·
բարե։

Ս̃բ ամբրոսիոս · բարե։

Ա.մ սուրբ հայրապետք և
խոստովանողք · բարե_
խօսեցէք ։

Սրբուհի մարիամ մագ_
դաղենացի · բարե։

Սրբուհի կատարինէ · բարե։

Սրբուհի անաստասիա ·
բարե։

Ամ սրբուհի կուսանք և այրիք. բարեխօսեցէք:
Ամ սուրբք և ընտրեալք այ. բարեխօսեցէք:
Այցելու լեր տր. խնայեա՛ նմ տր:
Քաւիչ լեր նմ. և անսա՛ մեզ տր:
Յամ չարէ. ազատեա՛ զնս տր:
Ի բարկուէ քումմէ. ազատ:
Ի յիշխանուէ դիւին. ազատ:
Ի բոցոյ հրոյն. ազատ:
Ի բանտէ ստուերաց մահու. ազատ:
Սն անարատ և ամբիծ յղութն քոյ. ազատ:
Սն ծննդեան քոյ. ազատ:
Սն ամենաքաղցր անուան քոյ. ազատ:

Վ՛ս բազմութե՛ն ողորմու-
թե՛ն քոյ․ աղաչ։
Վ՛ս վշտագին չարչարանաց
քոց․ աղաչ։
Վ՛ս մեծագին արեան քոյ․
աղաչ։
Վ՛ս ամենայն խոցուածոց
քոց․ աղաչ։
Վ՛ս անարգական մահուան
քոյ․ աղաչ։
Մեղաւորքս զքեզ աղա-
չեմք․ լո՛ւր մեզ։
Որ զՄարիամ արձակեցեր․
և աւազակին լուար․
զքեզ։
Որ զկարգեալսն 'ի փրկու-
թի փրկես ձրի․ զքեզ։
Օի զծնօղս, զմերձաւորս,
և զբարերարս մեր 'ի
յատակոց դժոխոց ապ-

րեցուցանել հաճեսցիս.
զքեզ։

Որ զա՛մ հաւատացեալ
ննջեցելս ՚ի յաւիտենա
կան դատապարտութենէ
ազատել հաճեսցիս. ըզ
քեզ։

Որ ա՛մ հաւատացեալ
ննջեցելոց, որոց ՚ի յերկ
րի յատուկ յիշատակ ոչ
լինի, ողորմիլ հաճես
ցիս. զքեզ։

Որ ամենեցուն խնայել
և ներել հաճեսցիս. ըզ
քեզ աղաչ։

Որ զկարօտութի՛ն մեր լցու
ցանել հաճեսցիս. զքեզ։

Որ ջոկք հրեշտակաց պայ
ծառա՛մբ օգնեսցեն մեզ.
զքեզ։

Ով դասք նահապետաց և
մարգարէից նպաստ նմ
լինիցին. գբեգ:
Ով փառաւոր երամք ա-
ռաքելոց յինքեանս ըն-
կալցին զնա: գբեգ:
Ով զօրք պայծառազգեաց
մարտիրոսաց պարառ-
ցեն զնոքօք. գբեգ:
Ով պարք խոստովանող
սրբոց առաջնորդեսցեն
նոցա. գբեգ:
Ով խումբք կուսանաց
հրճուելոց զհետ նմ լի-
նիցին: գբեգ:
Ով առ ստեղծիչն իւր-
եանց, որ զնա ՚ի հողոյ
երկրի կերպացոյց, անդ-
րէն դառնալ կարիցեն.
գբեգ:

Զի՛ դնեմք հեզ և քաղցրա-
գութ տնդ յի՞նչ բարե-
գթութ երևեսցի. գքեզ:
Զի առ աջակողմն քո 'ի
վիճակս ընտրելոց դնն
ընկալցիս. գքեզ.
Որդի՛ այ. աղբիւր գթութե.
գքեզ:
Որ զբանալիս ունիս զմա-
հու, և զդժոխոց. ըզ-
քեզ աղաչեմք լո՛ւր մեզ:
Գառն այ, որ բառնաս
զմեղս աշխարհի.
շնորհեա՛ նց զհանգիստ:
Գառն այ, որ բառնաս
զմեղս աշխարհի.
շնորհեա՛ նց զհանգիստ:
Գառն այ, որ բառնաս
զմեղս աշխարհի.
շնորհեա՛ նց զմշտնջենա-

ւորն

ւորն հանգիստ ։
Ք՟ս լուր մեզ ․ ք՟ս անսա մեզ ․ տ՟ր ողորմեա ․ ք՟ս ողորմեա ։

Աղօթք ։

Քեզ տ՟ր յանձն առնեմ զհոգի ծառայի քո ․ (կամ աղախնոյ ․) զի վախճանեալ ՚ի կենցաղումս, կենդանասցի ՚ի քեզ ․ և զմեղս, զորս մարդկային տկարութե՟ գործեաց, դու ներմամբ ամենողորմ գթութե՟ քո, ջնջեսցես ․ ՚ի ք՟ս յ՟ս ՚ի տ՟ր մեր ։ Հայր մեր, և այլն ։

## Տաղ Մեռելոց ։

Յաւուր յայնմիկ յաւուր ցասման ·
բնաւ կենցաղք յաճիւն դառնան ·
Ըստ գուշակի, և ըստ Դաւթեան ։

Որքան երկիւղ է լինելոց ·
մինչ դատաւորն խիստ գալոց ·
զհամայնս յանկարծ խըռովելոց ։

Փողն ահաբեկ յորժամ հնչի,
՚ի գերեզմանս հանուր երկրի ·
բնութիւն բոլոր յարեան ածի ։

Մահն և բնութիւն յոյժ եր-
կնիցէն.
մինչ տարերծուածք փոյթ
յառնիցէն,
զի դատողին համար տայ-
ցեն։
Գիրք դպրութե՛ յառաջ
բերի.
յորում բոլորն պարու-
նակի.
ուստի աշխարհ ճշդի՛
դատի։
Մինչ դատաւորն յատեան
նստցի.
որ ինչ թաքուն, անդ
յայտնեսցի.
ոչինչ անվրէժ յայնժամ
թողցի։
Զինչ անդ թշուառս եմ
ասելոց.

կամ՝ զոր միջնորդ աղեր_
սելոց ·
մինչ են հազիւ՛ արդարք
կելոց ։
Որքայդ սարսելի մեծութ՟ ·
պարգեւատու կենդանութ՟ ·
կեցո՛ զիս աղբիւր գթութ՟,
Յիշեա՛ յս՟ գթած տէր իմ·
որ մարմնացար 'ի պատ_
ճառս իմ·
մի՛ մերժեր զիս մինչ դա_
տիցիմ։
'Ի խնդրել զիս նստար խոն_
ջեալ·
փրկեցեր զիս 'ի խաչ ելեալ
տո՛ւր զի լիցեմ՝ քեւ ես փր_
կեալ ։
Արդար դատող վրէժխն_
դրութ՟ ·
զձիր շնորհեա՛ ինձ թողութ՟·

յառաջ քան զօր դատա-
ղութե ։
Իբր յանցուոր միշտ տագ-
նապիմ .
զի շառաւագնեն մեղք զե-
րեսս իմ .
ինձ մաղթողիս ներեա՛ Տր
իմ ։
Որ զմարիամ արձակեցեր .
աւազակին իսկ ներեցեր .
զյոյս ինձ եւ մեծ շնոր-
հեցեր ։
Աղերսանք իմ ոչինչ ար-
ժեն .
բայց գթուե՛դ առ քեզ
ելցեն .
զի մի՛ գեհեանք զիս կլ-
զիցեն ։
Ի մէջ օդեայց տեղի շնոր-
հեա՛ .

յայծեաց 'ի բաց զիս ո-
րոշեալ.
յաջակողմեան զիս զետե-
ղեալ:
Մինչ զանիծեալսն հեր-
քիցես.
հրոյն կիզման դատուիցես.
զիս ընդ օրհնեալս հրաւի-
րիցես:
Խոնարհագէմ զքեզ ա-
ղերսեմ.
զսիրտ իմ փղձկեալ քեզ
նուիրեմ.
զհոգ վախճանի իմ քեզ
յանձնեմ:
Որ արտասուաց օրն այն
իսկ է.
մինչ յաճիւնից նա յառ-
նիցէ.
որ ընդ մեղաց դատելի է:

Ապա ամէն ա̃ծ ներեա՛ ·
գթու̃թ քով յա̃ խնայեա՛ ·
հանգիստ յաւէժ տ̃ր պար-
գեւեա՛ · ամէն ։

# Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Աղ— օ̃րն ձեր յ̃ դ̃ ։

Տէր ողորմեա՛ ։
Քր̃ ողորմեա՛ ։
Տ̃ ողորմեա՛ ։
Յ̃ լո՛ւր մեզ ։
Քր̃ անսա՛ մեզ ։
Հայր երկնաւոր ա̃ծ · ո-
ղորմեա՛ մեզ ։
Որդի փրկիչ աշխարհի ա̃ծ ·
ողորմ

Հոգիդ սբ ած · ողորմ:
Սբ երրորդութին մի ած · ողորմեա՛ մեզ:
Յս որդի այ կենդանւոյ · ողորմ:
Յս ճառագայթ հօր · ողորմեա՛:
Յս ճաճանչ լուսոյ յաւիտենականի · ողորմ:
Յս թգւոր փառաց · ողորմ:
Յս արեգակն արդարութե · ողորմ:
Յս որդի մարիամու կուսին · ողորմ:
Յս սքանչելի · ողորմ:
Յս ած հզօր · ողորմ:
Յս հայր հանդերձելոյ յաւիտենին · ողորմ:
Յս մեծի խորհրդոյ հրեշտակ · ողորմ:

Յս ամենակարող․ ողորմ։
Յս ամենահամբեր․ ողորմ։
Յս ամենահնազանդ․ ողոր։
Յս հեզ և խոնարհ սրտիւ․
ողորմ։
Յս ողջախոհութեն սիրող․
ողորմ։
Յս իսկական սիրող մեր․
ողորմ։
Յս ած խաղաղութե․ ողորմ։
Յս առջնորդ կենաց․ ողոր։
Յս օրինակ առաքինութե․
ողորմ։
Յս նախանձայոյզ հոգւոյ․
ողորմ։
Յս ած մեր․ ողորմ։
Յս ապաւէն մեր․ ողորմ։
Յս հայր աղքատաց․ ողոր։
Յս գանձ հաւատացելոց․
ողորմ։

Ո՛վ քաջ հովիւ․ ողորմ։
Ո՛վ լոյս ճշմարիտ․ ողորմ։
Ո՛վ իմաստութիւն յաւիտենական․ ողորմ։
Ո՛վ բարութիւն անհուն․ ողորմ։
Ո՛վ ճանապարհ մեր և կեանք․ ողորմ։
Ո՛վ ցնծութիւն հրեշտակաց․ ողորմ։
Ո՛վ վարդապետ առաքելոց․ ողորմ։
Ո՛վ ուսուցիչ աւետարանչաց․ ողորմ։
Ո՛վ արիութիւն մարտիրոսաց․ ողորմ։
Ո՛վ լոյս խոստովանողաց․ ողորմ։
Ո՛վ մաքրութիւն կուսանաց․ ողորմ։
Ո՛վ պսակ ա͞մ սրբոց․ ողորմ։

Այցելու մեր լեր. խնայեա՛
մեզ Տ̃ր:
Քաւիչ մեր լեր. անսա՛
մեզ Տ̃ր:
Յա̃մ մեղաց. զերծո՛ ըզ-
մեզ Տ̃ր:
Ի ցասմանէ քումմէ. զեր-
ծո՛ զմեզ Տ̃ր:
Յորոգայթից դիւ՛ին. զերծ:
Ի հոգւոյ պոռնկութե̃. զերծ:
Ի յարակայ մահուանէ.
զերծո՛:
Ի ստունգանութե̃ աջակե-
ցութե̃ց քոյ. զերծո՛:
Ի̃ խորհրդոյ ս̃բ մարդե-
ղութե̃ քոյ. զերծո՛:
Ի̃ ծննդեան քոյ. զերծ:
Ի̃ ամենասո̃բ մանկութե̃
քոյ. զերծո՛:
Ի սուն ս̃ծ ասքանչ վարուց
քոյ.

քոյ. զերծո՛ զմեզ Տ՟:
Վ՟ն աշխատալից վաստակ-
մանց քոց. զերծո՛:
Վ՟ն հանդիսի չարչարանաց
քոց. զերծո՛:
Վասն ամենեան խաչիդ և
միայն թողեալ լինելոյ
քոյ. զերծո՛:
Վ՟ն մշտապէն նուաղման
քոյ. զերծո՛:
Վասն մահու և թաղման
քոյ. զերծո՛:
Վ՟ն լուսափայլ յարութե՟
քոյ. զերծո՛:
Վ՟ն քոյին համբարձման.
զերծո՛:
Վ՟ն քոյին ցնծութե՟. զերծ:
Վ՟ն քոյին փառաւորութե՟.
զերծո՛:
Գառն Ա՟յ, որ բառնաս

զմեղս աշխարհի․
խնայեա՛ ի մեզ Տր։
Գառն այ, որ բառնաս
զմեղս աշխարհի․
անսա՛ մեզ Տր։
Գառն այ, որ բառնաս
զմեղս աշխարհի․
ողորմեա՛ մեզ Տր։
Քս լո՛ւր մեզ։
Քս անսա՛ մեզ։

Աղօթք։

Տէր Յս Քս․ որ ասացեր․ հայցեցէ՛ք, և առնուցուք․ խնդրեցէ՛ք, և գտջիք․ բաղխեցէ՛ք և բացցի ձեզ։ Արդ աղաչեմք տո՛ւր մեզ որ հայցեմքս, զներգործութիւն ածային սիրոյ քոյ․ զի ըզ-

քեզ

քեզ 'ի բոլոր սրտէ՝ բանիւք և արդեամբք սիրեսցուք. և 'ի գովութենէ քումմէ բնաւ մի՛ դադարեսցուք, որ կենդանի ես և թագաւորես ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյն 'ի յաւիտեանս. ամէն։

Տէր Յիսուս Քրիստոս, զերկիւղ և զսէր մարդկութեան քոյ Աստուածութեամբ օծեցելոյ. տուր մեզ համապազ ունիլ յանձինս մեր. քանզի ոչ երբէք անտես առնես զնոսա. զորս հաստատեալ ունիս 'ի սերտ սիրելութեան քո. Աստուած, որ կենդանի ես և թագաւորես 'ի յամենայն յաւիտեանս. ամէն։

Երգ առ ս՟բն Հաւոչսս ։

Ո՛վ որ հաւըքս ընդ քեզ
ողջոյն ․
ազնուագըրմ և հօրամոյն․
կրեն՝ի կողմնդ ձախագոյն․
զարդ խաչի մահու հան_
գոյն ։
Ո՛վ որ հաւըքս պանդուխտ
վտար ․
ըղձանտահար թուժես
խոյառ ․
ախտացելոց առողջարար․
յայտնեալ ձնուից թժիշկ
ձարտար ։
Ո՛վ որ հաւըքս բարեխօ_
սեալ ․
հրեշտակեն աղդմմբ կո_
չեալ ․

պատուե՛մք զքեզ՝ ա̃ծար-
եալ.
վանիչ ժանդին մահու
թունեալ:
Բարեխօսեա՛ վ̃ս մեր ո՛վ
երանելիդ հռոքոս.
Զի արժանի լիցո՛ւք զեր-
ծանիլ՚ի մահտարաժմէ:

Աղօթք:

Տէ՛ր ա̃ծ, ամենակալ. ա-
ղաչեմք և պաղատիմք առ
քեզ. տո՛ւր մեզ ընդունիլ
յանձինս մեր զպտուղ բա-
րեպաշտ հայցուածոց. և
բարեխօսութ̃բ երանելի
խոստովանողին քո սրբոյն
հռոքոսի բա՛րձ բարեգթու-
թ̃բ քով զմահտարաժամն

'ի ժողովրդենէ քումմէ ։
Ո՜վ զի ծանիցեն մանկա_
նացու մարդիկ, թէ քո
հրամանաւ գան 'ի վերայ՝
այսպիսի հարուածք․ և քո
ողորմութեամբ դադարին․ 'ի
քս՟ յս՟ 'ի տր՟ մեր․ որ կեն_
դանի ես և թագաւորես
ը՟ որդւոյ և ընդ ս՟բ հոգ_
ւոյդ յաւիտեանս․
ամէն ։

## Խորհրդածութիւնք ամենասուրբ Վարդարանին :

Վարդարանն, 'ի մէջ ուղղափառաց՝ ոչ այլ ինչ է, քան պսակ մի, կամ հիւսուած հոգևոր՝ բանիւք խորհրդականօք յաւետարանէ անտի քաղեալ՝ և իբր վարդիւք հիւսեալ. զոր կուսին կուսանաց մեր մօրն մատուցանեմք . զի հիւսուածն, կամ պսակ՝ յատկապէս 'ի գլուխս կուսանաց՝ վասն զարդու դնի :

Իսկ արդ՝ վարդարանն հիւ-սեալ լինի կրկնելով զտէ-րունական աղօթսն հըն-գիցս. և զողջունատուու-թիւն հրեշտակական՝ յիս-նիցս:

Ուստի վարդարանն երիցս կրկնեալ՝ հիւսէ զթիւ հա-րիւր և յիսուն ՚ի յողջու-նատուութեն, որ է թիւ սաղմոսաց դաւթեան. յոր-մէ թուոյ՝ զեւեալն զայն վարդարան՝ յարանուանե-ցին սաղմոսարան երանու-հւոյ կուսին:

Հնգիցս ՚ի վարդարանին զաղօթսն տէրունական կրկ-նեմք, զի զհնգեցունց վի-րացն ք՜ի զյիշատակն նո-րոգեսցուք: Իսկ զողջու-

նա-

նատուածութիւն հրեշտակա-
կան՝ յարեմք իւրաքանչիւր
հայրմերի՝ տանիցս, զի 'ի
միտս մեր յիշատակեսցին
տանաբնեայ պատգամքն
այ :

Զնոյն յիններորդն 'ի քո-
լոր վարդարանին կրկնեմք,
զի զխակատար ներումն
մեղաց մերոց, որ յիններ-
եակ թուով յօբելինին 'ի
գիրս սբս նշանակի, բա-
րեխօսութբ երանուհւոյ
կուսին՝ 'ի ձեռն արդեանց
տրունական չարչարանացն
ընդունիցիմք :

Բայց ոչ զի միտք աղօթո-
ղին մի զրկեսցի 'ի պտղոյ
իւրմէ, որում դժուարին
երևի, և ձանձրացուցիչ

տու նոյն բանս՝ այնք կրկ-
նեալք ուշադիր լինիլ, բա-
րեպաշտօրէն կարգեալ ե-
ղև, զի իւրաքանչիւր վար-
դարան հնգիւք խորհրդա-
ծութեք կատարեսցի, ո-
րոց 'ի խոկմունսն՝ մինչ բե-
րանն զբառսն արտաբե-
րէ, միտքն զբաղեսցի:
Նախկին փորձօրինին սեպ-
հականեալ են հնգեքին խն-
դութիւնք, կամ ուրախու-
թիւնք ամենասրբ ածածնին
հիւսեալ հնգիւք տասնե-
կօք. որովք՝ նոյն երանու-
հին լցեալ եղև, յայնց որք
պատահեցան քի, շուրջ
զտնօրէնութեն նր:

Որք են այսոքիկ.

Աւետումն հրեշտակին մարդեղութեան։

Այցելութիւն Եղիսաբեթի։

Ծնունդն Քրիստոսի։

Ընծայումն Քրիստոսի 'ի տաճարն։

Գիւտ մանկանն Յիսուսի 'ի մէջ վարդապետաց։

Յերկրորդ վարդարանէն լինի յիշատակ հնգից խորհրդածութեանց չարչարանացն Քրիստոսի։

Որք են այսոքիկ։

Աղօթելն, և ըմբռնումն նորին 'ի պարտիզին։

Ձաղկումն նորին։

Պսակումն Քրիստոսի փշօք։

Բարձումն խաչին Քրիստոսի։

Խաչելութ՟ին ք՟սի ։
Յերրորդ վարդավառին յա-
ռաջքերին հնգեքին խոր-
հրդածութ՟ք փառաւորա-
կանք, յետ մահուան ք՟սի
տ՟ն մերոյ ։

Ութ են աւուրքն ։

Յարութ՟ի տ՟ն ։
Համբարձում՟ն նորին յեր-
կինս ։
Գալուստ հոգւոյն ս՟բյ 'ի
մարիամ, և յաշակերտսն ։
Վերափոխում՟ն ա՟ծածին
կուսին ։
Պատկում՟ն ն՟ր ։
Յորոց յայտ է յօգնապա-
տիկ պտուղն կիրառութ՟ե
վարդավառնիս այսօրիկ ․ զ՟ի․
որով նորոգի յիշատակ ա՟մ

խորհրդածութեանց կենացն
քսի. և ա̃ծածին կուսին.
և գլխաւոր մասանց հա-
ւատոյ: Որ արդարև հա-
մառօտութիւն այս այնքան
օգտակարագոյն է ամենե-
ցուն, որքան յաճախագոյն
լինի կիրառութի սորին՝ քան
գրեանց: Սա̃ զի կարէ ա-
սացեալ լինել սա նաև
յայնց, որք ոչ գիտեն ըդ
դպրութի: Այլ և 'ի կու-
րաց. և 'ի նստելոց 'ի ձիս.
և 'ի կառս. նաև 'ի կայե-
լոց 'ի խաւարչտին տեղւոջ:
Այլ ո՛չ երբէք պարտէ 'ի
բաց թողուլ զխորհրդա-
ծութիւնս, շուրջ զորովք
իմացողութին, և յիշողու-
թիւնն պարապելոց են,

թէև 'ի սկզբան անդ երևեսցի ունիլ զդժուարութիւն ինչ. 'ի յիշողութեան միշտ պահելն զն՟մ. քանզի կիրառութ՟ին սակաւուց աւուրց զբովանդակ իրն առնէ դիւրագոյն: Մտացած՟ս ասելն զտասանեակն լոկ . դոյն ինչ է, և բազում ցնդմանց ենթակայ՝ նաև ունի զսակս ինչ մխիթարութ՟ի , և զբաղմապատիկ ձանձրութ՟ի , եթէ ոչ՝ յիւրաքանչիւր տասնեակսն՝ զխորհրդածութ՟ի իմն պարունակեսցես:

Քանզի եթէ զխորհրդածութ՟իս զայնոսիկ 'ի բաց թողուցուս, զորկես զքեզ 'ի փրկաւէտ, և 'ի համեղա-

դոյն յիշատակէ խորհրդա-
ծութեց՝ կենացն քո և սր̄
ա̄ծածնին ։

Աղերս դիւրագոյն առնելոյ զվար-
դարանն ։

Ոլի բարեպաշտօնքն դիւ-
րագոյն, և զգուշագոյն կա-
րասցեն պահել, զխորհր-
դածութիս առաջադրելս
'ի յասելն զվարդարանն .
զկերպ իմն յոյժ դիպուկ ,
և դիւրագոյն զկնի յարես-
ցուք ։
Նախ քան թէ զտասնեակ
մի սկսանիցես , զխորհր-
դածութին զայն , որ 'ի նմին
խոկալի է, համառօտաբար
բերցես 'ի յիշողութի քո-
զի զկնի ունիցիս 'ի մտի ,

մինչև զտառանեալն աւար-
տեսցես ։
Յետ այսորիկ՝ Է սկզբամբ
տէրունական աղօթից, զմտծ
իբր ներկայ՝ առաջադրես-
ցես հոգւոյ քում որպէս
զհայր ։
Ընդ սկզբամբ հրեշտա-
կական ողջունատուութեն
զերանուհի կոյսն իբրև
զմայր ․ ոչ զի մտածուին
շուրջ զնովքօք պատաղեալ՝
մի կարասցէ տատանիլ այսր
և անդր ։
Կամ արդարև մտածես-
ցես զքեզ շրջադայիլ՝ ի տե-
ղիսն յայնոսիկ՝ յորս խոր-
հրդածութիքն այնոքիկ ե-
ղեն ․ և խորհեսցիս զքեզ
ներկայ գոլ այնց ․ իբր թէ

կամ այնուքիկ առաջի ա-
չաց քոց ։

Ու այս յոյժ դիւրաւ կա-
րէ լինիլ . ոչ երբեմն պա-
րապորդ գոլով մտածեմք
զմեզ շրջիլ ընդ բոլոր եւ-
րոպիա՝ և տեսանել զզար-
մանալի իրս ։

Նաև ՚ի զմիւռին , ՚ի բիւ-
զանդիա , ՚ի յամիթ , և ՚ի
բերիա . և ՚ի յայլ տեղիս
հեռաւորս , ուր և միտք
մեր խորհիցի , շրջաբե-
րիմք ։

Եւ է այլ ոմն գիտուն , և
բարեպաշտ , որ զամս ա-
ւելի քան զվաթսուն , ու-
նէր զսովորութիւն յա՛մ՝ ա-
ւուր ասել զկարգարանն ,
հաստատէ թէ չիք իւր

գտեալ զայլ լաւագոյն ե-
ղանակ, բաց 'ի կրթութենէ
և 'ի կերպէ անտի, զոր 'ի
սկզբան անդր առաջադրե-
ցաք։ Եւ ես յաւարտել
իւրաքանչիւր տասնեկաց'
իբր առ 'ի զուարձունի հոգ-
ւոյ ասէր զայսոսիկ բանս.
որով և իսկ հրճուէր։

Այսինքն, յաւարտել ա-
ռաջին տասնեկին' ասէր.
Տասն հազարիցս օրհնես-
ցեն զքեզ կոյս մայր փա-
ռաւորեալ Մարիամ, և այլն։
Եւ յետ երկրորդ տասնե-
կին ասէր։ Քսան հազա-
րիցս օրհնեսցեն, և այլն։
Այնպէս և զկնի երրոր-
դին, չորրորդին. և զհինգ-
երորդին ասէր. զորս գտ-

ցես 'ի թիւս իւրաքանչիւրոց ստորագրեալ՝ պատշաճաւոր, և գեղեցիկ, շահաւէտ, և օգտակար, և զուարճալի բանիւք։

### Թէ յորում աւուր պարտէ ասել։

Մարդ՝ կարեն մտածել յաւուր կիրակէի, և հինգշաբաթի խորհրդածութիւնք երրորդ սեռին, որք փառաւորականք ասին։

Յաւուր երկուշաբաթի, երեքշաբաթի, և շաբաթու նախկին սեռին, որք ուրախականք անուանին։

'Ի չորեքշաբաթի, և ուրբաթի՝ երկրորդ սեռին, որք ցաւագնականք կոչին։

Խորհ. յաղագս հնարից առնլոյ
զամենայն վարդարանն ։

